

# Ուղեցույց Գրուպի գործունեության վրա քրեական ռիսկի ազդեցությունը կառավարելու և միևնույնացնելու համար

December 2015





# Վեոլիան պատասխանատվություն է ստանձնում

Ցանկացած երկրում, որտեղ <Վեոլիա>-ն ծավալում է գործունեություն, օրենքների համաձայն, նախատեսվում են մեկ կամ այլ աստիճանի քրեական պատժամիջոցներ, որպեսզի ապահովվի համապատասխանություն օրենսդրական կամ կանոնակարգող այն դրույթներին, որոնք համապատասխան երկրները հատկապես կարևորում են իրենց գործունեության ոլորտների օպտիմալ գործողությունների և, ընդհանուր առմամբ, նրանց ստեղծության համար:

<Վեոլիա>-ն հատկացրել է զգալի ռեսուրսներ՝ ապահովելու համապատասխանություն այն երկրների օրենքներին և կանոնակարգերին, որտեղ այն ծավալում է գործունեություն: Այս միջոցները ներառում են էթիկայի ուղեցույցի մաս հանդիսացող առաջարկություններ, տարբեր <Համապատասխանության ձեռնարկներ>-ի նախապատրաստում և հատուկ վերապատրաստման նախաձեռնություններ, ինչպիսիք իրականացվում են մրցակցային և հակամենաշնորհային օրենքների ոլորտներում:

Համեմատած իրավաբանական ազդեցության այլ տիպերի հետ, որոնց առջև Գրուպն անխուսափելիորեն հայտնվում է, քրեական պատասխանատվությունն իրենից ներկայացնում է բացառիկ լուրջ վտանգ: Այն կարող է կիրառվել և՛ անձանց, և՛ կորպորատիվ մարմինների նկատմամբ: Ավելին, քրեական օրենսդրությամբ նախատեսված պատժամիջոցները կարող են ազդել և՛ անհատների, և՛ կորպորացիաների գույքի կամ սեփականության իրավունքների վրա, ինչպես նաև կարող են ներառել անհատների ազատագրում կամ կորպորացիաների դեպքում՝ գործունեության արգելքներ:

Այսպես, հատուկ հաղորդակցության և վերապատրաստման ծրագիր է անհրաժեշտ, որպեսզի <Վեոլիա Գրուպ>-ի բոլոր աշխատակիցներն ավելի լավ պատրաստված լինեն սահմանելու աշխատանքային օրենսգրքի այն ոլորտները, որոնց դեպքում գոյություն ունեն քրեական պատժամիջոցների ռիսկեր: Նման ծրագրի ձեռնարկումն ավելի կպաշտպանի հենց աշխատակիցներին և <Վեոլիա Գրուպ>-ի այն ընկերություններին, որոնք վերջիններիս աշխատեցնում են նման ռիսկերի դիմաց:

Այսպիսին է այս <Գրուպի գործունեության քրեական ռիսկի ազդեցության կառավարման և մինիմալացման ուղեցույց>-ի նպատակը: Սույն ուղեցույցը պետք է համարվի որպես կարևոր գործիք, որի նպատակն է՝ ապահովել, որ <Վեոլիա>-ն հակված լինի լիովին օգտվել գերազանցության առումով իր հեղինակությունից և այլ լավագույնս վաստակված օգուտներից, որոնք ձեռք են բերվում նրա ստեղծագործական ունակություններից, տեխնիկական հմտությունից, առևտրային հզորությունից և հաճախորդների աճող կարիքները բավարարելու համապատասխան ունակությունից:

**Անտուան Ֆրերո**, Գլխավոր գործադիր տնօրեն և նախագահ <Վեոլիա Ինվայրոնմենթ>

Տարբեր երկրներում, որտեղ <Վեոլիա Գրուպ>-ը գործում է, այն պարտավորվում է հավատարիմ ծնալ մի շարք անհաշվելի կանոնների, որոնք կիրառվում են աշխատանքային օրենսգրքի բազմազան ոլորտներում:

Այս կանոններից որոշ մասին համապատասխանության որևէ թերացում՝ անկախ այն հանգամանքից, թե այն վերաբերում է որոշակիորեն գործող դրական պարտավորություններին, թե, հակառակը, իրականացման արգելքներին, այն կարող է հանգեցնել քրեական պատժամիջոցների:

Չնայած որոշ երկրներ, որտեղ Գրուպը գործունեություն է ծավալում, պարտադիր իրավաբանական կանոններին համապատասխանելու նպատակով ծնացածներից ավելի են հակված թերացումների համար կիրառելու քրեական պատժամիջոցներ՝ մեր բոլոր ծնացած երկրներն իրականում կիրառում են քրեական սանկցիաները՝ համաձայն իրենց համապատասխան իրավական ավանդույթների և իրավական ու դատական ոլորտների:

Հետևաբար, իրավաբանական պահանջները, որոնք կարող են պոտենցիալ կերպով Գրուպին ենթարկել քրեական պատասխանատվության, պետք է իրենցից ներկայացնեն թե՛ մեր աշխատանքները ղեկավարող իրավական պարտավորությունները, թե՛ ռիսկ, որը չպետք է անտեսվի որևէ մեկի կողմից:

**Իրականացումը ղեկավարող սոցիալական պարտավորությունները.** Ներկայումս կարևոր նոր միտում է առաջանում: Ֆոնդային շուկաները, ներդրողները և պատվիրատուներն այլևս ընկերություններին չեն գնահատում՝ հիմնվելով միայն նրանց տնտեսական և ֆինանսական արդյունքների վրա, ներկայումս նրանք նաև հաշվի են առնում այն եղանակը, որով այդ նվաճումները ձեռք են բերվում: Քանի որ քրեական պատժամիջոցներ նախատեսող իրավաբանական ստանդարտները դիտարկվում են որպես կորպորատիվ էթիկայի առարկա, համապատասխանությունն այլևս ոչ թե իրենից ներկայացնում է ընդամենը իրավական պարտավորություն, այլև այն, ինչը ներկայումս կարող է լրջորեն ազդել՝ վատ կամ լավ առումով, ընկերության արդյունքների կամ պատրաստակամության վրա: Այսպես, համապատասխանությունը մեր

աշխատանքների համար առաջնահերթ հարց է, որի կարևորությունը բարձրանում է մինչև նույն մակարդակը, որում է տեխնոլոգիական և շուկայական պայմանների օպտիմալացումը:

**Լուրջ ռիսկ.** Քրեական գործերն իրար բոլորովին ոչ նման գործեր են, որոնք ներառում են զուտ քաղաքացիական կամ առևտրային մտահոգություններ: Քաղաքացիական և առևտրային գործերը ներառում են միայն անհատների և ընկերությունների միջև առկա մասնավոր բնույթի բաժինները: Նման դեպքերը սովորաբար լուծվում են կրոնատների փոխհատուցմամբ: Քրեական հարցերը, հակառակը, ներառում են գործողություններ, որոնք համարվում են ամբողջովին Ֆասակար հասարակության համար: Դրանք ձեռնարկվում են դատախազի կողմից, ով ներկայացնում է հասարակության շահերը և ով գործում է իր սեփական նախաձեռնությամբ կամ ի պատասխան քրեական բողոքի: Քրեական դատավճռությունը կարող է հանգեցնել ազատազրկում պարտադրող դատավճռի, որևէ գործունեության կամ որոշակի հաստիքներ զբաղեցնելու/այնքանով, որքանով խոսքը վերաբերում է անհատներին/ ամբողջական կամ մասնակի արգելք, հասարակական աշխատանքների ծրագրում մասնակցելու արգելք, որոշակի քաղաքացիական և քաղաքական իրավունքների կորուստ կամ, վերջապես, տուգանքների վճարում /այնպիսի գումարներով, որոնք կարող են եական լինել/: Կորուստ կորոզների համար կարող է կիրառվել նաև կորուստների փոխհատուցում:

Առիասարակ, տվյալ երկրի քրեական օրենքները կիրառվում են այն դեպքերում, երբ արգելված գործողությունն իրականացվում է կամ ազդեցություն է գործում իր սահմանների ներսում: Այնուամենայնիվ, որևէ երկրի օրենքները կարող են կիրառվել նաև, երբ արգելված գործողությունն իրականացվել է երկրի տարածքից դուրս կամ չի գործել որևէ ազդեցություն այնտեղ: Կոռուպցիայի կանխարգելման ուղղված օրենքներն իրենցից ներկայացնում են օրենքի այս տիպի օրինակ: Բավականին հայտնի է, որ Միացյալ Նահանգներն առաջնորդվում են այս մոտեցմամբ, սակայն վերջինս միակը չէ, որ այդպես է վարվում: Իրոք, մի շարք երկրներ, ինչպիսիք են Միացյալ Թագավորությունը, Գերմանիան, Ֆրանսիան և Չինաստանը, առաջնորդվում են այդ նույն մոտեցմամբ: Միջազգային բրենդ ունեցող տարբեր կորպորատիվ ընկերություններ, ինչպես նաև նրանց ղեկավար անձնակազմը, այսպիսով,



ենթարկվում են զգալի ռիսկի և կարող են նույն փաստերի համար ենթակա դառնալ հետաքննության և քրեական հետապնդման ինչպես Ֆրանսիայում, այնպես էլ արտասահմանում: Օրինակ, մրցույթային և հակամենաշնորհային օրենքների, արժեթղթերի մասին օրենքի, հակակոռուպցիոն օրենքի հարցերով մեկ երկրում թույլ տրված խախտումները կարող են ազդել մի երկրորդ երկրում շուկաների գործունեության, բաժնետերերի իրավունքների կամ կառավարության վրա: Որպես արդյունք, խախտումը կարող է դառնալ քրեական դատավարության առարկա այդ երկրորդ երկրում: Կորպորատիվ և բիզնես քրեական մեղադրանքների շատ տարբեր ձևերը, որոնք կարող են ընծանվել ընդդեմ ընկերության և վերջինիս աշխատակիցների, իրենցից ներկայացնում են ռիսկի չափազանց հատուկ դեպքեր՝ համեմատած իրավաբանական ռիսկերի այլ ձևերի հետ, որոնք առջև ընկերությունը կարող է հայտնվել:

Կորպորատիվ և բիզնես հանցանքների հետևանքների ինքնատիպ բնույթն է, որ դրդել է թե՛ սույն Ուղեցույցը տարածելու որոշմանը, թե՛ դրա տարածմանն ուղեկցող վերապատրաստման նախաձեռնություններին, այսինքն՝ օրենսդրության այս ոլորտի ինքնատիպությունը կարող է բացատրվել հետևյալ բնութագրերով.

- Այն փաստը, որ այն իրենից ներկայացնում է էթիկական կորպորատիվ վարքագծի անքակտելի մաս, այն հետևանքների լրջությունը, որը կարող

է առաջնալ քրեական դատավճռի հետևանքով և՛ ֆինանսական /քրեական տույժեր/, և՛ գործառնական (օրինակ՝ արգելք որոշակի աշխատանքներ իրականացնող կամ որոշակի հաստիքներ զբաղեցնող անհատների նկատմամբ կամ արգելք ընկերությունների կողմից որոշակի աշխատանքների ծրագրերի գծով անցկացվող մրցույթների վրա, կամ պայմանագրի ստորագրում Կառավարության հետ) տեսանկյունից:

- Ընկերության իմիջի և նրա ղեկավար աշխատակազմի հեղինակությանը Ֆաստելու հնարավորությունը (որը կարող է լինել շատ ավելի լուրջ բնույթի ու չափի, քան կարող էր լինել պարզ վարչական կամ քաղաքացիական տույժերի դեպքում) այն փաստը, որ ռիսկը կրում են և՛ կորպորատիվ ընկերությունը, և՛ այն անհատները, որոնք գործում են վերջինիս անունից կամ նրա հանձնարարությամբ (ղեկավար անձնակազմը և, որոշ դեպքերում, աշխատակազմի այլ անդամներ)՝ նման անհատների նկատմամբ ազատազրկման դատապարտում կիրառելու հնարավորությամբ:
- Այն փաստը, որ մի երկրում նախաձեռնված գործողությունը կարող է հանգեցնել հետաքննության կամ քրեական հետապնդման մեկ այլ երկրում:

<Վեոլիա Գրուպ>-ի նկատմամբ հնարավոր քրեական պարտավորության ռիսկը մինիմալացնելու նպատակով՝ դրա տեղի ունենալու հնարավորության և հետևանքների լրջության առումով պետք է իրականացնեն հետևյալ գործողությունները:

## Տեղեկացվածության բարձրացում օրենքների այն ոլորտների վերաբերյալ, որտեղ քրեական օրինազանցություններն ամենահաճախակին են

Քրեական մեղադրանքի ռիսկը սրընթաց վերելք է ապրում մի շարք ընկերություններում և նրանց աշխատակիցների համար: Քրեական մեղադրանքները խստորեն տուգանվում են որոշ երկրներում, ինչպիսիք են Ֆրանսիան և Միացյալ Նահանգները, և, հակառակը, այն թվում է շատ ցածր Ֆնացած երկրներում՝ անհամապատասխան կամ միայն հատուկ ներքին կիրառման շնորհիվ կամ նույնիսկ այն պատճառով, որ արգելված վարքագծերը կարող են այնտեղ բիզնեսի իրականացման ամօրյա ձևի մաս կազմել: Այնուամենայնիվ, ծայրահեղ անիրաժեշտություն է քրեական մեղադրանքի ռիսկը մշտապես պահել գիտակցության մեջ: Սրա պատճառներից մեկն այն է, որ որոշակի օրենքներ կարող են կիրառվել դրանք ընդունած երկրների աշխարհագրական սահմաններից դուրս: Չգոն լինելու երկրորդ պատճառ է հանդիսանում այն, որ հենց արտասահմանյան ընկերություն լինելու կարգավիճակը երբեմն կարող է կոնկրետ տեղերում ազդեցությունը մեծացնող գործոն հանդիսանալ, նույնիսկ եթե սովորաբար այն <ոչ գրավոր> կանոն է:

Այսպիսով, սույն Ուղեցույցի նպատակը՝ ուշադրությունը տարբեր ռիսկերի վրա ուղղելն ու ամենաեական օրինակներն ընդգծելն է: Անշուշտ, սույն Ուղեցույցում անդրադարձած հարցերը սպառիչ չեն: Համապատասխանաբար, եթե սույն վարքագիծը կամ իրավիճակը Ձեզ մտահոգում է որպես անհամատեղելի իրավական կամ էթիկայի պարտավորություններ, Դուք այդ հարցը պետք է բարձրացնեք Ձեր վերահսկիչի կամ իրավաբանական, մարդկային ռեսուրսների, ֆինանսաների կամ այլ համապատասխան բաժնի հետ: <Վեղի>-ի էթիկայի հանձնաժողովը նույնպես հասանելի է բոլոր աշխատակիցներին զաղտնիության հիմունքներով:

- Քրեական հետապնդումներ ամենահաճախակին նախածեռնվում են ընդդեմ ընկերությունների կամ նրանց գործատուների՝ հետևյալ ոլորտներում:
  - Կոռուպցիա՝ և՛ մասնավոր, և՛ հասարակական;
  - Միջնորդների, խորհրդատուների, վերավաճառողների և այլնի օգտագործում;
  - Գրուպի շահագործման աշխատանքներ (աշխատողի առողջություն և անվտանգություն, շրջակա միջավայրին համապատասխանություն և այլն); հաշվապահությանը կամ կորպորատիվ փաստաթղթերին առնչվող խախտումներ, ներառյալ գրանցման պահանջների հետ կապված խախտումները;
  - Կորպորատիվ սեփականության թերօգտագործում և անհամապատասխանություն, շահերի բախում;
  - Հափշտակում, գողություն և խարդախություն;
  - Արդարադատության խոչընդոտում:

## Որոշակի ռիսկային ոլորտների գնահատում

### 1. Կաշառակերություն

#### ա) Պետական պաշտոնյաների կաշառակերություն

Պետական աշխատակցի կոռուպցիա ասելով՝ պետք է հասկանալ վերջինիս որևէ տիպի ամաժելության խոստացում կամ տրամադրում այնպես, որ դրա համաձայն նրա կողմից գործել կամ ինչ-որ գործողությունից ձեռնպահ թաքցնել լինեն ի նպաստ ընկերությանը: Նմանապես, պետական աշխատակցին արգելված է խնդրել կամ ընդունել որևէ տիպի ամաժելություն՝ որևէ գործողություն կատարելու կամ որևէ գործողությունից ձեռնպահ թաքցնելու փոխարեն, որը լինի անհամատեղելի նրա աշխատանքային պարտավորությունների հետ: Այս տիպի խնդրանքին համաձայնելն արգելվում է: Նաև, այն անձը, ով տեղյակ է փաստացի, ընթացիկ կամ հնարավոր օրինազանցություններին, սակայն ոչինչ չի անում դրանց անկայությունը վերահսկելու կամ, հնարավորության դեպքում, դրանք դադարեցնելու նպատակով, կարող է հավասարապես ենթակա լինել քրեական հետապնդման: Փաստացի կամ հնարավոր օրինազանցության մասին տեղյակ լինելու և դրանց գոյությունը վերահսկելու նպատակով միջոցներ չձեռնարկելու, ինչպես նաև դրա անկայության



դեպքում այն չդադարեցնելու փաստը համարժեքորեն ենթակա են քրեական հետապնդման: Յուրաքանչյուր երկիր պատժում և դատապարտում է իր պետական պաշտոնատար անձանց և աշխատակիցների կողմից թույլ տրված ցանկացած կոռուպցիա: Ավելին, Միացյալ Նահանգների <Արտասահմանում կոռուպցիոն գործելակերպի մասին> օրենքի /"FCPA", Միացյալ Թագավորության Կաշառակերության մասին օրենքի/ և Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպությունների /SՀՀԿ/ բոլոր 38 երկրների, ներառյալ՝ Ֆրանսիայի կողմից, ՏՀԶԿ <Օտարերկրյա պետական պաշտոնատար անձանց կաշառակերության դեմ պայքարի կոնվենցիան> (միջազգային համաձայնագիր՝ ընդունված այն երկրներում, որտեղ Գրուպն իրականացնում է իր գործունեության հիմնական մասը), տեղի օրենսդրության մեջ ընդունելու արդյունքում, պետական պաշտոնատար անձի

կողմից արտասահմանում ձեռնարկված ցանկացած գործողություն խստիվ արգելվում է: Որպես այդպիսին, պետական պաշտոնատար անձի կողմից արտասահմանում կոռուպցիայի ցանկացած գործողություն՝ նախածեռնված ֆրանսիական ընկերության աշխատակիցների կամ վերջինիս որևէ մասնաճյուղի աշխատակիցների, կամ նշված ընկերության կամ վերջինիս մասնաճյուղից որևէ մեկի համար աշխատող արտասահմանյան գլուխների գործակալի կողմից, կարող է հանգեցնել սովալ ընկերության քրեական պատասխանատվության ոչ միայն այն երկրում, որտեղ ձեռնարկվել է քրեական հետապնդումը, այլև Ֆրանսիայում: Նմանատիպ, որևէ ֆրանսիական ընկերություն, որը բաժնետոմսեր ունի Միացյալ Նահանգների ֆոնդային բորսայում, կարող է քրեական հետապնդման ենթարկվել ամերիկյան իշխանությունների կողմից արտասահմանյան երկրներում ձեռնարկված գործողությունների համար, եթե նույնիսկ սովալ երկիրն ՏՀԶԿ անդամ չէ:

Ի լրուսն, ընկերությունը կարող է քրեական հետապնդման ենթարկվել Միացյալ Նահանգներում, եթե որևէ փոխանցման կոնկրետ պատճառը խեղաթյուրվել է վերջինիս արտասահմանյան մասնաճյուղերից որևէ մեկի հաշիվներում՝ անկախ գործարքի գումարից:

Պետական պաշտոնատար անձանց հրավերներ ու նվերներ տալը որոշ երկրներում արգելված է՝ անկախ դրանց արժեքից: Այլ երկրներում, այնուամենայնիվ, նվերների և հրավերների արժեքը չպետք է գերազանցի այն գումարը, որ սովորաբար համարվում է քաղաքավարության ավանդական սովորույթների շրջանակում: Թույլատրելի ժամանցներին և նվերներին վերաբերող հարցերը պետք է ուղղվեն Ձեր Բաժնի Իրավաբանական վարչությանը:

Վերջերս՝ մի քանի տարբեր միջազգային հակակոռուպցիոն պայմանագրերի ընդգրկումն ազգային օրենքներում մեծացրել է տեղական իշխանությունների կողմից իրենց երկրների սահմաններից դուրս ձեռնարկված կաշառակերության գործողությունների գծով արդյունավետ կերպով քրեական գործեր հարուցելու հնարավորությունը:

Պետական պաշտոնյա հասկացությունը պետք է ընկալվի լայնորեն: Այն պետք է վերաբերի ցանկացած ընտրովի մանդատի շահառուի, ցանկացած պետական աշխատակցի, պետական գումարով վարձատրվող ցանկացած անձի, նրանց ընտանիքների անդամներին կամ մոտ անձնական ընկերներին կամ այն կազմակերպություններին, որտեղ ունեն բաժնեմասեր և որոնք կարող են ազդեցություն ունենալ պետական գումարների օգտագործում ընդգրկող որոշումների վրա: Որոշ երկրներում հակակոռուպցիոն օրենքները տարածվում են նաև արհմիությունների պաշտոնատար անձանց վրա:

- Նախագրուպական նշանները ներառում են.
- Գովազդային միջոցառումներ և գործարքներ ռիսկային երկրներում,
  - Չափազանց կամ անսովոր մեծ փոխհատուցում ողջամիտ՝ հստակ և կոնկրետ մեկնաբանությունների բացակայության դեպքում,

- Վճարումներ՝ կատարված երրորդ կողմերին կամ այն երկրից դուրս, որում ծառայությունը մատուցվել է,
- Ֆիկտիվ ընկերությունների կամ կանխիկ գումարների կիրառումը:

Կարևոր է տեղյակ լինել և հարգել այս հարցերը ղեկավարող տեղի տարբեր օրենքները: Առանձնահատուկ ուշադրություն պետք է դարձնել քաղաքական կուսակցություններին կատարվող ներդրումներին: Այս վերջին կետի կապակցությամբ պետք է առաջնորդվել <Շտրակյան ժամանակահատվածներում իրականացվող վճարների կամ հումանիտար օգնության վճարների նկատմամբ կիրառվող արգելքների> վերաբերյալ Գրուպի քաղաքականությամբ և տեղի գործող կանոնակարգերով: Պետական պաշտոնատար անձանց կոռուպցիային ցանկացած առումով առնչվող բոլոր գործողությունները բացարձակապես և կտրականապես արգելվում են այն բոլոր երկրներում, որտեղ <Վեոլիա>-ն գործունեություն է ծավալում:

**բ) Անձնական կոռուպցիա**

Անձնական կոռուպցիա ասելով՝ պետք է հասկանալ ցանկացած տիպի առավելության խոստացում կամ տրամադրում որևէ անձի, ով չի հանդիսանում պետական պաշտոնյա և գործելիս խախտում է իր հաստիքի պարտավորությունները: Եվ հակառակը, որևէ անձի, որը պետական պաշտոնյա չէ, արգելված է խնդրել կամ ընդունել որևէ տիպի առավելություն՝ որևէ գործողություն կատարելու կամ որևէ գործողությունից ձեռնպահ լինելու փոխարեն, որը լինի անհամատեղելի նրա աշխատանքային պարտականությունների հետ: Նման խնդրանքներին համաձայնելն արգելվում է:

Անձնական կոռուպցիայի բոլոր գործողություններն արգելվում են: Մասնավորապես, բոլոր գնումները պետք է համապատասխանեն Գրուպի Գնումների կանոնադրությանը: Նույն կերպ, ոչ պատշաճ առավելության որևէ խոստում կամ տրամադրում, որը նախատեսված է մասնավոր ընկերության գնման որոշման վրա ազդելու նպատակով, խստիվ արգելվում է:

**2. Միջնորդներ կիրառելու հետ կապված ռիսկեր**

<Վեոլիա Ինվայրենմենթ>-ը և Նրա բաժինները չպետք է օգտագործեն երրորդ կողմեր /<Միջնորդներ>/ անելու այն, ինչ իրենց իսկ իրավունք չունեն անել: Այն դեպքերում, երբ թույլատրվում է օգտագործել միջնորդ և որոշվում է այդպես անել, մեր Գրուպը, եթե որևէ բաժնի թույլատրվում է կիրառել միջնորդ և այն որոշում է անել դա, Բաժինը պետք է համապատասխանեն Գրուպի քաղաքականությանը<sup>1</sup>, որպեսզի հավաստիացուեն որունեն իրենց հետ աշխատող միջնորդների և գործակալների ամբողջականության համար: Այս կերպ գործելը կապահովի, որ նման ծառայություններ մատուցողների ընտրությունը նախապես հաստատվի, ինչպես նաև վերահսկողություն կապահովի նրանց աշխատանքի և փոխհատուցման նկատմամբ: Այն նաև հնարավորություն կտա պայմանագրի համատեքստում խիստ կանոնների ներքո ստուգելու, որպեսզի պայմանագրով նախատեսված ծառայություններն իրականացվեն արդյունավետորեն:

Նախագրուպացնող նշանները ներառում են.

<sup>1</sup> Քաղաքականություն՝ միջնորդների գործունեության և առևտրային ծառայությունների մատուցման վերաբերյալ

- Այնպիսի անհատների ընտրություն, ովքեր չեն ենթարկվում նախնական ընտրության պրոցեսի;
- Տեղական իշխանությունների կողմից որոշակի միջնորդներ համալրելու պահանջներ;
- Այնպիսի անհատների համալրում, որոնք կանոնավոր աշխատանքն իրենից չի ներկայացնում երրորդ կողմերի ներկայացուցչություն;
- Անհատների համալրում, ովքեր չունեն այն հմտությունն ու ռեսուրսները, որոնք անհրաժեշտ են նրանց վրա դրված առաքելությունն իրականացնելու համար;
- Համաձայնություն <հաջողության դիմաց վճարին> (արդյունքների հետ կապված փոխհատուցում), որը շատ բարձր է կամ անսահմանափակ;
- Անհատների համալրում, որոնք չեն ցանկանում համապատասխանել Գրուպի արժեքներին ու քաղաքականությանը;
- Վճարման պահանջներ այլ երկրում կամ երրորդ կողմի միջոցով;
- Գործակալի կողմից պահանջ՝ համապատասխան պետական պաշտոնյաների հետ միայնակ և բացառիկ կապ ունենալու համար:



**3. Ծահագործման հետ կապված ռիսկեր**

Գրուպի առօրյա աշխատանքներն անհրաժեշտաբար իր տարբեր բաղկացուցիչ ընկերություններին ու նրանց աշխատակիցներին ենթարկում է քրեական դատական գործերի ռիսկի: Իրոք, աշխատանքային օրենսգրքի և բնապահպանության ոլորտների շատ օրենքներ և կանոնակարգեր կրում են քրեական պատժամիջոցների հնարավորություն:

● Կապված այն իրավախախտումների հետ, որոնք ներառում են ֆիզիկական Ջնա, գործատուն կամ նրա ղեկավարները կարող են դառնալ քրեորեն պատասխանատու՝ պատահական կերպով անհատին Ջնաս պատճառելու դեպքում՝ հիմնվելով անհատի նկատմամբ հարգանքի կամ անվտանգության ու պատշաճ խնամքի պարտավորությունների չհամապատասխանելու սկզբունքի վրա: Իրականում, տույժը կարող է մեծացվել, եթե դեպքը եղել է օրենքով կամ կանոնակարգով սահմանված անվտանգության կամ պատշաճ խնամքի մտադրված խախտման արդյունքում:

● Աշխատակիցների ապօրինի տրամադրումն իրավախախտում է, որը պատժելի է ֆրանսիական աշխատանքային օրենսգրքի համաձայն, որը քրեականացնում է շահութաբեր աշխատանքների իրականացումը, որոնց միակ նպատակն է աշխատակիցների տրամադրումը (բացի կոնկրետ սահմանված բացառություններից): Այսպես, անհրաժեշտ է զգուշանալ այնպիսի իրավիճակներում, երբ ենթակապալառուներն ու արտաքին ծառայություն մատուցողներն են տրամադրում պայմանագրային աշխատողներ: Նման դեպքերում, ճիշտ կլինի ներառել կոնկրետ և մանրամասն պայմանագրային պարտավորություններ, որոնք տրամադրում են նման աշխատողներ տրամադրողների՝ գործող օրենքներին համապատասխանության վերաբերյալ Գրուպի երաշխիքներ:

● Գրուպի հիմնական գործունեությունը ծառայությունների տրամադրումն է բնապահպանական ոլորտում: Պարտադիր բնապահպանական օրենքներին անհամապատասխանությունը ոչ միայն համապատասխան ընկերություններին և նրանց աշխատակիցներին է ենթարկում քրեական

պատժամիջոցների, այլև բացասական ազդեցություն է ունենում Գրուպի կողմից տրամադրվող ծառայությունների արժեքի, մեր բրենդի, իմիջի և բիզնեսի զարգացման մեր պոտենցիալի վրա:

Կարևոր է ապահովել Գրուպի կողմից օգտագործվող բոլոր ավտոմեքենաների և սարքավորումների ու մեխանիզմների պատշաճ պահպանումը, ինչպես նաև վերջինիս վերաբերյալ ճշգրիտ փաստաթղթերի պահպանումը: Կարող է ակնկալվել, որ պետական իշխանությունների կողմից նախաձեռնվի մանրամասն զննում այն դեպքերի համար, երբ մեր ավտոմեքենաները կամ սարքավորումները հնարավոր է, որ ենթարկված լինեն պատահարների՝ հանգեցնելով մահի, մարմնական Ֆնասվածքի կամ էական բնապահպանական Ջնասի: Պահպանման հարցում թերացումը կամ փաստաթղթավորման խախտումը կարող է հանգեցնել ընկերության և/կամ պատասխանատու անձանց քրեական հետապնդման:



Հետևաբար, առավելագույն զգուշություն պետք է ցուցաբերվի գործառնական հարցերի գծով կիրառվող բոլոր օրենքներին և կանոնակարգերին համապատասխանության առումով:

**4. Մրցակցություն / Հակամենաշնորհային օրենք**

Ֆրանսիան, Եվրախորհուրդը, Միացյալ Նահանգները և այն երկրների մեծ մասը, որտեղ Վեոլիա Գրուպն աշխատանքներ է իրականացնում, ընդունել է խիստ կանոններ՝ հավաստիացնելու շուկայական մրցակցության ուժերի պատշաճ գործունեությունը: Չնայած այս կանոնները ներառում են բնութագրեր, որոնք արտացոլում են տարբեր իրավական համակարգեր, որտեղ դրանք գործել են, դրանք ունեն ընդհանուր նպատակ, այսինքն՝ հաճախորդների և ծառայություն մատուցողների միջև առողջ, ֆունկցիոնալ հարաբերություններ և միևնույն բիզնես ոլորտում ընկերությունների միջև ակտիվ մրցակցության ապահովում: Մրցակցության օրենքի խախտումները, որոնք ամենալուրջ են և ամենապատասխանակալը քրեական գործ հարուցելու համար, ներառում են հետևյալը՝ մրցույթների հրավերների պատասխաններ, որոնք համար ավելի վաղ գաղտնի պայմանավորվածություն է եղել ձեռք բերված այլ հայտատուների հետ՝ առաջարկվող պայմանների վերաբերյալ, գաղտնի առևտրային համաձայնագրեր (կարտելի համաձայնագրեր) սահակիցների միջև, և <կողոպտիչ> գնային գործելակերպ /մրցակիցներին ճնշելու համար/:

<Վեոլիա>-ն իր աշխատակիցների համար մատչելի է դարձրել մրցակցության օրենքի վերաբերյալ գրավոր նյութեր ու հատուկ վերապատրաստման ծրագրերը, ներառյալ՝ <Մրցակցության օրենքին համապատասխանության ուղեցույց> անվանմամբ ձեռնարկը՝ հրատարակված 2009թ.-ին: Բնականաբար, տվյալ գործընթացի օրինակականության հետ կապված ցանկացած կոնկրետ կասկածի կամ հարցի դեպքում անհրաժեշտ է խորհրդակցել իրավաբանական բաժնի հետ:

**5. Կորպորատիվ փաստաթղթեր և հաշվապահական հաշվառում**

Հաշվապահական հաշվառումը գործիք է՝ ընկերությունների կառավարման և աուդիտի համար: Այն իրենից ներկայացնում է առանցքային տարր՝ Գրուպի ղեկավարների, բաժնետերերի և գործընկերների, ինչպես նաև այլ որոշակի երրորդ կողմերի համար, ներառյալ՝ վարկատուներն ու այլ պարտատերերը: Կորպորատիվ հաշվապահական գրառումների վերաբերյալ օրենքների խախտումը Ֆնասում է ընկերության նկատմամբ վստահությանը և կարող է հանգեցնել քրեական մեղադրանքների:

Չնայած կոռուպցիայի դեմ պայքարի վրա իր առաջնային կենտրոնացմանը՝ ամերիկյան <Արտասահմանում կոռուպցիոն գործելակերպի մասին> օրենքը /Վերոնյալ/ նույնպես ներառում է հաշվապահական հաշվառման հարցերի և ներքին վերահսկման/աուդիտի վերաբերյալ դրույթներ: Գործնականում, հաշվապահական հաշվառման կանոնների խախտումն է, որ առաջացնում է <Արտասահմանում կոռուպցիոն գործելակերպի մասին> օրենքի գծով քրեական հետապնդումներ: Ամփոփելով՝ <Արտասահմանում կոռուպցիոն գործելակերպի մասին> օրենքի՝ հաշվապահական հաշվառմանը վերաբերող դրույթներով պահանջվում է.

- Հաշվապահական հաշվառման փաստաթղթեր, որոնք ընկերության գործունեությունն արտացոլում են իրական ու ճիշտ ձևով և բավականին մանրամասնությամբ;
- Ներքին վերահսկման/աուդիտի համակարգ (ներառյալ՝ արտասահմանյան մասնաճյուղերում), որը տրամադրում է համապատասխան երաշխիքներ առ այն, որ տվյալ ընկերության հաշիվները կազմվել են իրական և ճիշտ ձևով, որ այնտեղ նշված

գործարքները լիազորվել են աշխատանքների բնականոն ընթացքով և, որ անհրաժեշտ բոլոր միջոցները ձեռնարկվել են՝ ապօրինի գործարքներից խուսափելու և հաշվապահությունում չհաշվառումը կամ ոչ պատշաճ հաշվառումը կանխելու համար:

Կորպորատիվ փաստաթղթերն ու երրորդ կողմերին տրամադրված փաստաթղթերը պետք է սահմանեն փաստերի վերաբերյալ իրական և ճշգրիտ հաշվապահական հաշվառում: Այս պահանջը կիրառվում է, մասնավորապես, հաճախորդներին կամ վարչական մարմիններին տրամադրվող՝ արժեքի ու գնի հարցերին առնչվող տվյալների և տեղեկությունների նկատմամբ:

Առանձնահատուկ զգուշություն է անհրաժեշտ ընկերության կողմից կազմված բազմաթիվ պաշտոնական գրավոր նյութերի կապակցությամբ, ինչպիսիք են, օրինակ, տնօրենների խորհրդի նիստերի արձանագրությունները, բաժնետերերի նիստերի մասնակցության ցուցակները, հաշիվ-ապրանքագրերը: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ հետևյալից ցնակացածը Միացյալ Նահանգներում կարող է առաջացնել քաղաքացիական գործ և/ կամ քրեական հետապնդում՝ ներքին հսկողական մեխանիզմների հաստատման ծախսողումը, նման հսկողական վատ կիրառումը, դիտավորյալ՝ մեկ կամ ավելի գործարքների ոչ պատշաճ գրանցումը որևէ անհատի կողմից (օրինակ, ծախսերի փոխհատուցման համակարգչային համակարգում/ծրագրում) և կասկածելի գործարքների չճշտելը կամ չհետազոտելը:

Ֆրանսիայում՝ Քրեական օրենսգրքի համաձայն կեղծ կամ կեղծված փաստաթղթերի ստեղծումը կամ օգտագործումը համարվում է անկախ հանցագործություն:

**6. Կորպորատիվ սեփականության չարաշահում կամ յուրացում**

Ֆրանսիայում՝ ընկերության ղեկավարների կողմից կորպորատիվ սեփականության չարաշահումը կամ յուրացումը նշանակում է. <Ընկերության ակտիվների կամ վարկի անբարեխիղճ օգտագործում՝ կա՛մ անձնական նպատակներով, կա՛մ հօգուտ այլ ընկերության, որտեղ նրանք ունեն ուղղակի կամ անուղղակի շահեր՝ գիտենալով, որ այն հավանապ

է ընկերության շահերին>: Ֆրանսիայի Դատարանների Նախադեպային իրավունքն ընդունել է լայն տեսակետ ղեկավարների այն տիպերի համար, ովքեր կարող են մեղադրվել կորպորատիվ գույքի չարաշահման կամ յուրացման համար. այս մեկնաբանությունը ներառում է և՛ փաստացի, և՛ պաշտոնատար, և՛ դե ֆակտո ղեկավարներին: Այլ երկրների օրենքները ներառում են հանցանքի նմանատիպ կամ թեթևակիորեն տարբերվող սահմանումներ, նման օրենքները կարող են իրավական հիմք ապահովել այդ միևնույն փաստերի խմբի միաժամանակյա քրեական հետապնդման համար:

**7. Հափշտակում, գողություն և խարդախություն**

Գումարների հափշտակումը, խորդախությունը և գողությունն այն 3 օրինազանցություններն են, որոնք կարող են իրագործվել ընդդեմ Գրուպի՝ աշխատակիցների կամ արտաքին անհատների կողմից՝ չվատակած օգուտ իրենց համար ձեռք բերելու նպատակով: Այս նույն հանցանքները կարող են իրագործվել հենց Գրուպի կողմից՝ գործելով իր աշխատակիցների միջոցով՝ ընդդեմ, օրինակ, իր հաճախորդների, մատակարարների, ենթակապալառուների կամ գործընկերների:

Որոշ դեպքերում, այն ինչը կարող է թվալ ընդամենը պայմանագրի խախտում, կարող է, ըստ էության, իրենից ներկայացնել հանցանք, և այս ռիսկը հատուկ մեծանում է այն դեպքում, երբ հաճախորդը կառավարական մարմին է կամ երբ կառավարական մարմինը որևէ այլ պատճառով ներգրավված է տվյալ հարցի հետ կապված գործարքում:

**8. Խոչընդոտելու հանցանք**

Խոչընդոտելու հանցանքը բնութագրվում է որպես վարքագիծ, որը, մտադրված կամ չմտադրված կերպով, ազդեցություն ունի աշխատակիցների շահերը ներկայացնող մարե՛նի նորմալ աշխատանքը կամ աշխատակիցների ներկայացուցիչների կողմից իր առաքելության նորմալ իրագործումը կանխարգելելու վրա:

Իրավական տեքստերը, որոնք վերարտադրում են խոչընդոտման նման հանցանքներ, բազմաթիվ են և իրենց բնույթով բազմազան: Մասնավորապես,



տարբեր գործող օրենքները հակված են ավելացնելու այն տարբեր մարմինների և անհատների թիվը, որոնք պոտենցիալ կերպով կարող են լինել հանցանքի գոհ (ինչպիսիք են աշխատանքային խորհուրդները և նման այլ մարմինները, ներառյալ Ֆրանսիայում, այսպես կոչված, <Հաստատման հանձնաժողովները>, <Ընկերության կենտրոնական հանձնաժողովները>:

Խոչընդոտման հանցանք գոյություն չունի միջինարևելյան երկրներում, որտեղ, որպես կանոն, միավորված ներկայացուցչություն գոյություն չունի:

**9. Այլ կարևոր ոլորտներ, որոնք ներառում են քրեական ռիսկի ենթարկումը**

Օրենքի կանոնավոր, սովորաբար գործող կանոնների ներքո ծագող մի շարք քրեական օրինազանցություններն այնպիսի բնույթի են, որ ենթակա են բիզնես գործարքների ընթացքում առաջացող ռիսկերի: Դրանք ներառում են, որպես օրինակ, վստահության չարաշահումը, կեղծ կամ խարդախ փաստաթղթերի ստեղծումն ու օգտագործումը, համակարգչային խարդախությունը և կաշառանկերությունն ինչպես նաև տարբեր օրինազանցություններ:

Ստորև բերված են որոշ օրինակներ.

- **Պաշտոնի չարաշահումը**  
Պաշտոնի չարաշահումն որևէ ոգի այն առավելությունն է, որ վերջինս գործադրում է իր ազդեցությունը, որպեսզի որևէ երրորդ կողմի կողմից բարենպաստ վերաբերմունք ստանա հօգուտ ընկերությանը

(<ակտիվ> պաշտոնի չարաշահում) կամ նա հակված է օգտագործել իր ազդեցությունը՝ հօգուտ երրորդ կողմի (<պասիվ> պաշտոնի չարաշահում): Որոշ երկրներում, պաշտոնի չարաշահումը դիտվում է որպես կոռուպցիայի ձև և կիրառվում են նույն քրեական պատժամիջոցները: Այլ երկրներում և տարածաշրջաններում, ինչպիսին է Միջին Արևելքը, պաշտոնի չարաշահումը, ըստ էության, չի դիտվում որպես առանձին հանցանք:

● **Հովանավորություն**

Հովանավորության հանցանքը կարող է կիրառվել փաստերի տվյալ խմբի դեպքում՝ ի լրուհն այլ օրենքների և կանոնակարգերի, որոնք կարող են կիրառվել: Հովանավորությունը ենթադրում է անարդարացի առավելության տրամադրում՝ խախտելով հասարակական աշխատանքների ծրագրերին կամ պետական ծառայությունների կոնցեսիաներին բաց հասանելիության սկզբունքը, ինչպես նաև թեկնածությունների հավասարության կանոնը: Այն ընկերությունը, որը ստանում է նման առավելություն, կարող է մեղադրվել ու հետապնդվել և՛ հովանավորության, և՛ գողացված ակտիվները ստանալու ու թաքցնելու համար: Պահանջվում է զգուշություն, որպեսզի պետական հրահանգող կողմերն ապահովեն, որ Գրուպը չօգտվի որևէ ոչ պատշաճ առավելությունից:

● **Արդարադատության խոչընդոտում**

Արդարադատության խոչընդոտման տարբեր ձևերը, որոնք օրենքի համաձայն համարվում են

որպես քրեական, հաճախ ձեռնարկվում են այլ հանցանքների հետ միասին՝ հաջողաբար, ինչպես մրցակցության օրենքի կանոնների խախտումները: Արդարադատության խոչընդոտման քրեական հետապնդման ռիսկ կարող է լինել, օրինակ, եթե աշխատակիցը հետազոտության համատեքստում փորձել է թաքցնել պոտենցիալ կասկածելի գործ՝ ոչնչացնելով կամ թաքցնելով ապացույց, փորձելով ազդել վկայության/ցուցմունքի վրա կամ հետազոտողներին մերժելով որոշակի արխիվային նյութերից կամ վկայություններից օգտվելու հնարավորությունը:



### Առանձնահատուկ կենտրոնացման անհրաժեշտություն՝ քրեական պատասխանատվության բարձր ռիսկի առումով համապատասխանության նկատմամբ

Քրեական պատասխանատվության ենթարկվելու մինիմալացումը պետք է ներառի, նախ և առաջ, հատուկ կենտրոնացում համապատասխանության վրա, որը նպատակադրված է վերը սահմանված տարբեր բարձր ռիսկի ոլորտներին:

Տույժերի սանկցիաներ պարունակող աշխատանքային օրենսգրքի այս պարտադիր դրույթների ապահովման միջոցով է, որ Գրուպը կարող է իրեն և իր աշխատակիցներին պաշտպանի քրեական հետապնդման ռիսկից:

Համապատասխանության նախաձեռնությունը պետք է, մասամբ, իրենից ներկայացնի աշխատակազմի վերապատրաստման ծրագրեր՝ ներառելով, բնականաբար, ղեկավար աշխատակազմի վերապատրաստման ծրագրեր:

Այն դեպքերում, երբ քրեական օրենքի տուժանքներ պարունակող օրենքի որևէ պարտադիր դրույթի անհամապատասխանության կամ նշանակության

կասկած է լինում, Բաժնի Իրավաբանական վարչության կողմից խորհրդատվությունը պարտադիր է:

### Քրեական հետապնդման ռիսկի բաշխումը կառավարման հիերարխիայի համապատասխան մակարդակով՝ նման ռիսկը մինիմալացնելու մի այլ միջոց է



Հաճախ կորպորատիվ և բիզնես հանցանքի դեպքերում դատապարտման առարկան կազմող վարքագիծն առաջանում է անբավարար զգուշացման կամ ռիսկի կանխարգելման միջոցների իրականացման ընթացքում զգուշության պակասի արդյունքում:

Համապատասխան լիազորությունների ընդունումը պետք է որպես պատասխանատու կողմեր նշանակված անձանց (այսինքն՝ նշված լիազորությունները կրողներին) թույլ տա իրականացնել նրանց հսկողական և ռիսկի կառավարման պարտավորություններն ավելի արդյունավետորեն, քան կարող էին բարձրաստիճան ղեկավարները, որոնք օրեցօր հեռացվում են բոլոր գործարքների մանրամասներից:

### Պատշաճ վերահսկողություն ներքին և արտաքին հաղորդակցությունների նկատմամբ



Ներքին և արտաքին հաղորդակցությունների պատշաճ ձեռնարկումն ու վերահսկումն էական են: Ընդհանուր սխալ է այն ենթադրությունը, որ բանավոր հաղորդակցությունները չեն կարող անդրադարձվել դրանց հեղինակին կամ գրավոր նշումները, որոնք համարվում են ամբողջությամբ ոչ պաշտոնական կամ անձնական իրենց բնույթով (ինչպես, օրինակ, ձեռագիր նշումները փաստաթղթի լուսանցքում, Post-It® նշումները, օրագրերը և էլ. գրությունները) չեն կարող

հանգեցնել իրավաբանորեն համապատասխան հետևությունների: Իրավագիտությունը լի է ընկերության գրառումներում գտնված գրավոր նշումների օրինակներով, որոնք առաջին հայացքից թվում է, որ բացառապես անՖասս են, սակայն իրականում կիրառվել են որպես իրավախախտման ապացույց:

Նույնաստիճան զգուշություն պետք է ցուցաբերել արտաքին հաղորդակցության նկատմամբ՝ որևէ իրավազանցության մեջ <Վեոլիա>-ի կամ Նրա աշխատակազմի անդամներից մեկի կողմից անարդարացիորեն առաջացած կասկածների դեմ վերահսկողություն իրականացնելու նպատակով:

#### Ամփոփում

- Լինել լավատեղյակ և զգայուն Գրուպի ազդեցությանն ու ռիսկերին՝ կապված աշխատանքային քրեական օրենսգրքի հետ, որոնք առաջանում են իր միջազգային գործունեության արդյունքում:
- Կասկածի դեպքում մշտապես դիմել ղեկավարության և Ձեր Բաժնիների ներքին իրավաբանական, կադրերի և ֆինանսական վարչությունների աջակցությանը. երբեք չկայացնել ինքնուրույն որոշում՝ տվյալ իրավիճակի օրինականությանն առնչվող որևէ հարցի հանդիպելիս:
- Երբեք ռիսկի չդիմել՝ ի Ֆասս Ձեր կամ <Վեոլիա Գրուպ>-ի հեղինակության՝ կարծելով, որ այն կարող է լինել հօգուտ Գրուպի:

